Հայտարարություն

Արցախի պետական համալսարանը ս.թ. հուլիսի 31-ից մինչև օգոստոսի 11-ը կազմակերպում է 2023-2024 ուսումնական տարվա հեռակա ուսուցման համակարգի ընդունելության փաստաթղթերի ընդունումը հետևյալ կրթական ծրագրերի գծով.

1. Տարրական մանկավարժություն և մեթոդիկա
2. Աշխարհագրություն
3. Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ
4. Պատմություն
5. Հայոց լեզու և գրականություն
6. Ռուսաց լեզու և գրականություն
7. Կենսաբանություն և քիմիա
8. Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/
9. Իրավագիտություն
10. Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա

Դիմորդները պարտավոր են ներկայացնել

1. միջնակարգ կրթության ատեստատը կամ միջին մասնագիտական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և մասնագիտական տեխնիկական կրթության մասին փաստաթուղթը (բնօրինակը),
2. 4 լուսանկար (3X4 սմ չափսի),
3. անձը հաստատող փաստաթուղթ, (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական), սոցիալական քարտ (պատճեն),
4. զինվորական գրքույկ և (կամ) զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինծառայությունն անցնելու մասին (արական սեռի ներկայացուցիչների համար),
5. սոցիալական վիճակը հաստատող տեղեկանք (առկայության դեպքում),
6. միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմներ (առկայության դեպքում),
7. տվյալ և նախորդ տարվա միասնական քննությունների վկայագիր (առկայության դեպքում)
8. ներբուհական յուրաքանչյուր քննության մասնակցելու, ինչպես նաև փաստաթղթեր ընդունելու և ձևակերպելու համար 1500-ական ՀՀ դրամ /«Արցախբանկ» ՓԲԸ-ում ԱրՊՀ հաշվեհամարին/ վճարելու վերաբերյալ անդորրագիր,
9. 1արագակար:

Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել

047-91-02-91, 097-25-25-50 հեռախոսահամարներով: